Հանգիստ Կիւրեղ վարդապետի Կիւրեղեան.

Տարեւոյս հոկտեմբերի 9-ին վախճանուեց Մայր Աթոռոյս միաբան Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը 49 տարեկան հասակում։

Հանգուցեալը ծնուել է Վաղարշապատում, ուսել Մայր Աթոռիս Ժառանգաւորաց դպրոցում։ 1885 թուին յունիսի 10-ին մտել է հոգևոր կոչման մէջ իբրև Ս. Էջմիածնի միաբան, ձեռնադրուել է 1886 թուին նոյեմբերի 29 սարկաւագ, 1890 թուին՝ ապրիլի 16-ին աբեղայ, և 1894 թուի ապրիլի 6-ին ստացել է վարդապետական կոչումն։

Պաշտօնավարել է Նոր—Բայազէտում որպէս գարծակալ ամբողջ գաւառի, վարել է առաջնորդական փոխանորդի պաշտօններ Ախալցխայում, Կարսում Ալէքսանդրապոլում և երկու անգամ Հին Նախիջևանում։

Մայր Աթոռում վարել է ճեմարանի տնտեսի և Վանական Կառավարութեան անդամի պաշտօնները։ Եղել է վանահայր Հառիճի և Երնջակայ վանքերում։

Իւր ծառայութիւնների համար վարձատրուել է ծաղկեայ փիլոնով և վարդապետական ականակուռ լանջախաչով։

Իւր բոլոր պաշտօնավայրերում յարգուած էր նա որպէս հիւրասէր, հասարակական խնդիրներով հետաքրքրուող և պարտաճանաչ հոգևորական։

Հանգուցեալ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանի մահը տեղի ունեցաւ Հին Նախիջևանում, ուր երկրորդ անգամ ժողովրդի ընտրութեամբ վարում էր փո-

խանորդի պաշտօն։

Հանգուցեալի մարմինը՝ ամփոփուեց Նախիջևանի Ս. Երրորդութիւն եկեղեցու բակում, վայելուչ յուղարկաւորութեամբ, որին հանդիսադիր լինելու համար Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ուղարկել Մայր Աթոռիս Լուսաբարձրագոյն Տ. Ղևոնդ եպիսկոպոսին։

Կիրեղ Վարդապետի մահը զգալի կորուստ է Մայր Աթոռիս համար։

«Բիւզանդիոնում» կարդում ենք, որ Կեսարիոյ Ս. Դանիէլ վանքի վանահայր Ստեփան եպիսկոպոս Սանդալճեան վախճանուել է հոկտեմբեր ամսում։

Հանգուցեալ Ստեփաննոս եպիսկոպոսը, ծընուել է 1837 թ., Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի ձեռնասունն էր և նրա հետ Բուրսայից եկաւ Մայր Աթոռս 1867 թ.։

1868 թ. եպիսկոպոս ձեռնադրուեց. հեռացաւ Մայր Աթոռից 70-ական թուականների սկզբին. կարճ ժամանակեայ փոթորկալից կեանքից յետոյ, մեկուսացաւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը. Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի ներողութեան արժանանալով՝ կարգուեց Թոմարզայի Ս. Դանիէլ վանքի վանահայր ուր և կնքեց իւր մահկանացուն 73 տարեկան հասակում։

Հանգուցեալ Ստեփաննոս եպիսկոպոսը դաստիարակուած լինելով Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի ձեռքի տակ՝ եկեղեցական կարգերի և երգեցողութեան մեծ հմտութիւն ունէր։

Լուսաւորեսցէ Տէր զհոգիս հանգուցելոցն և ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ։ Ամէն։